ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԷՆԵՐԳԵՏԻԿ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ԵՎ ԲՆԱԿԱՆ ՊԱՇԱՐՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐԻ

ՀՐԱՄԱՆ

16 Նոյեմբերի 2016 թվականի N 112-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԷՆԵՐԳԵՏԻԿԱՅԻ ԵՎ ԲՆԱԿԱՆ ՊԱՇԱՐՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐԱՐԻ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԷՆԵՐԳԵՏԻԿԱՅԻ և ԲՆԱԿԱՆ ՊԱՇԱՐՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԸՆԴԵՐՔՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՏՐԱՄԱԴՐՎԱԾ ԸՆԴԵՐՔԻ ՏԵՂԱՄԱՍԵՐԻ ԾԱՅՐԱԿԵՏԱՅԻՆ ԿՈՈՐԴԻՆԱՏՆԵՐԸ ARM WGS-84 ԿՈՈՐԴԻՆԱՏԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻՆ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆԵՑՆԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀՐԱՄԱՆՆԵՐԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՍԵՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 72-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի և 76-րդ հոդվածի պահանջներով, և հաշվի առնելով այն հանգամանքը, որ ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների նախարարության աշխատակազմի ընդերքի պետական տեսչության կողմից Հայաստանի Հանրապետության վարչապետի 24.10.2016 թվականի թիվ 02/18/16033-16 հանձնարարականի (այսուհետ՝ հանձնարարական) հիման վրա իրականացվում են Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի ստուգումների տարեկան ծրագրում ներառված բնօգտագործման վճար վճարող կազմակերպությունների մոտ ստուգումներ, ուստի հանձնարարականի պահանջները պատշաճ և սահմանված ժամկետներում կատարելու նպատակով.

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ

1. «Հայաստանի Հանրապետության էներգետիկայի և բնական պաշարների նախարարության կողմից ընդերքօգտագործման իրավունքով տրամադրված ընդերքի տեղամասերի ծայրակետային կոորդինատները ARM WGS-84 կոորդինատային համակարգին համապատասխանեցնելու նպատակով գործողություններ իրականացնելու մասին» N 19-Ա հրամանի 7-րդ կետը ճանաչել ուժը կորցրած:

2. Մինչև 2017 թվականի մայիսի 1-ը կասեցնել Հայաստանի Հանրապետության էներգետիկայի և բնական պաշարների նախարարի 2015 թվականի սեպտեմբերի 15-ի «Հայաստանի Հանրապետության էներգետիկայի և բնական պաշարների նախարարության կողմից ընդերքօգտագործման իրավունքով տրամադրված ընդերքի տեղամասերի ծայրակետային կոորդինատները ARM WGS-84 կոորդինատային համակարգին համապատասխանեցնելու նպատակով գործողություններ իրականացնելու մասին» N 395-Ա և 2016 թվականի փետրվարի 10-ի «Հայաստանի Հանրապետության էներգետիկայի և բնական պաշարների նախարարության կողմից ընդերքօգտագործման իրավունքով տրամադրված ընդերքի տեղամասերի ծայրակետային կոորդինատները ARM WGS-84 կոորդինատային համակարգին համապատասխանեցնելու նպատակով գործողություններ իրականացնելու մասին» N 19-Ա հրամանների (այսուհետ՝ հրամաններ) գործողությունները:

3. Մինչև հրամանների գործողության կասեցումը նախաձեռնված (սույն հրամանի ուժի մեջ մտնելու պահին չափագրված հանքավայրերում) ծայրակետային կոորդինատների ճշգրտումները պետք է ավարտին հասցվեն հրամաններով սահմանված կարգով՝ մինչև 2017 թվականի մայիսի 1-ը:

4. Հրամանների գործողության վերականգնումից հետո Հայաստանի Հանրապետության էներգետիկայի և բնական պաշարների նախարարության կողմից ընդերքօգտագործման իրավունքով տրամադրված ընդերքի տեղամասերի ծայրակետային կոորդինատները ARM WGS-84 կոորդինատային համակարգին համապատասխանեցնելու նպատակով գործողությունները պետք է իրականացվեն հրամաններով սահմանված կարգով:

5. Սույն հրամանի կատարման հսկողությունը վերապահել Հայաստանի Հանրապետության էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարության աշխատակազմի ղեկավարին:

ԱՇՈՏ ՄԱՆՈՒԿՅԱՆ